

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՆՐՈՒՔ

ՈՒՒՊՊԻՌՊՈՐՈՍ.— ԳՈՐԳԻ, ԲԱՆԱՆ,  
ԳԱՒԻԹ.— ՏԱՐԲԱՆ.— ՏԱՐՄՆ

(Շար. ՍՈՐՆ էջ 26-28և և վերջ)



Շարունակենք մեր պրպտումները: Խորենացին գիտէ՞ր արդեօք այն զրոյցները, որ նրան պատմեց երեք Հայերից մէկը: Աշինչ գիտենք այս մասին: Բայց երբ նա լսեց Ուրմպիոզորոսի պատմած զրոյցները՝ անշուշտ իսկոյն անզրադարձաւ որ զրանք իրան շատ լաւ ծանօթ ցցուց և պարուց երգերի նիւթերն են: Գրա համար էլ զբրում է որ հայ ծերերը «աւելի յաճախազոյն շարունակ տան յիշատակաւ»: Այս նոյն խօսքից երեւում է որ Խորենացին շարունակ լսած էր ցցուց և պարուց երգերը և գիտէր որ այդ երգերը յաճախ են երգում: Խորենացին հաւատած էր այդ զրոյցների իսկութեան: Նա անտարբեր էր նրանց հանդէպ: «Այսօրիկ զրոյցք սուտ և կամ թէ արդարեւ լաւ՝ մեզ չէ ինչ փոյթ» զբում է նա: Բայց նա կամենում է Սահակ Բագրատունուն ցոյց առլ իր խորհուրդների պարզամտութիւնը («զի իմացիս զառ ի քեզ պարզամտութիւն իմոց խորհրդոցս»), ուստի իր Պատմութեան մէջ է առնում «որ ինչ ի լրոյ (այսինքն երեք Հայերից լսածը) և որ ինչ ի զրոյց (այսինքն Սուրբ Գրքից և ուրիշ մատենաներից քաղածը):

Գորզին, Բանանն ու Գաւիթը չէին շարունակել ինչ չէին, ինչպէս կարծում է շ. Ղ. Ալիշան: Նրանք ուսեալ մարդիկ են, մատարականներ, որ նախորդների օրինակին հետեւելով երիտասարդ ժամանակ գնացել են Յունաստան «իմաստութիւն վարժելու»: Երեւում է որ նրանք ծանօթ էին Խորենացուն: Նրա ասածը թէ «և երրորդ սին Գաւիթ» չի նշանակում «և երրորդն էլ ոչ Գաւիթ», այլ «և մի երրորդն ևս Գաւիթ»: Ինչպէս երբեմն Յունաստանում՝ հաւանական է որ Հայաստան դաւնալուց յետոյ ևս, նրանք սովորութիւն ունէին ժամանակի ուսեալ մարդկանց խօսակցութիւնը ունկնդրելու և իրենց հերթին՝ լսած ու

իմացած բաները պատմելու: Այդպիսի մի խօսակցութեան ժամանակ էր անշուշտ որ նրանցից մէկը, որ «վարժեալ էր փիլիսոփայութեամբ», պատմեց Ուրմպիոզորոսից լսած զրոյցները Խորենացուն և իր ընկերներին: Խորենացին, որ անկասկած պատմական վառ հետաքրքրութիւն ունէր — իր գրական գործն ապացոյց է ասածիս — զբնահասեց այդ զրոյցները. տեսաւ որ նրանք «ճշմարտում են» իրան լաւ ծանօթ ցցուց և պարուց երգերի ասածները, և երբ առիթը ներկայացաւ՝ համառօտելով յիշատակեց իր պատմութեան մէջ: Այդ զրոյցները նրա աչքում պէտք է որոշ արժէք ստանային նաև այն պատճառով որ պատմողը յունաց լուսաւորութեան կեդրոններից մէկի մէջ ապրող իմաստուն էր, իրան փոխանցողը՝ յունական կրթութիւն ստացած և «փիլիսոփայութեամբ վարժեալ» մի մարդ. իսկ ինքը՝ յունական գիտութեան ջատագով: Ահա թէ ինչու նաև փոխանակ Պարսից «փճուն» առասպելների նման իր գրքից բաց դնելու, այն էլ Սահակ Բագրատունուց բռնադատում: Խորենացին իր գրքի մէջ է հիւսում Ուրմպիոզորոսի զրոյցները:

Ամփոփելով այս մանրապատում վերլուծութիւնը, կարող ենք ասել. Խորենացու պատմութեան այս հատուածի կորիզը Սեմի և Տարբանի մասին եղած զրոյցներն են: Այս զրոյցները պատմել է Յունաստանում մի գիտուն Ուրմպիոզորոս անունով, որ կարող էր հայ լինել յոյն անունով: Այդ զրոյցները Յունաստանում բուն իսկ պատմողից լսել են երեք ուսանող Հայեր—Գորզի, Բանան և Գաւիթ: Վերադառնալով հայրենիք՝ նրանք շարունակեցին այդ զրոյցները պատմել և ձերուներին շրջանում, որոնցից մէկն եղած է Խորենացին: Սա իր լրսածը համառօտելով հիւսած է իր պատմութեան մէջ: Ուրմպիոզորոսի զրոյցները նոյն բովանդակութիւնն են ունեցել, ինչ որ մեր ցցուց և պարուց երգերից մի քանիսը:

Անցնինք հիմայ Տարբանին և Տարօնին: Սովորաբար այնպէս են աւանդում իբր Տարօնը կոչուած է Տարբանի անունով: Մ. Արեղևանի վերակազմած բնագիրը կուսան չի տալիս այս կարծիքը պաշտպանելու: Այնտեղ կարդում ենք. «Բակ ի կրտսերագու-

նից որդոց նորա (Սեմի) Տարբան անուն... մեկնեալ ի հօրէն՝ բնակէ անդէն ի նոյն գետեղեր, յորոյ անուն և զգաւաւն անունն է Տարբան, և զանուն տեղւոյն ուր բնակեցան՝ կոչէ Յրօնս. զի անդ գաւառն ջրինն սկիզբն եղև բաժանելոյ որդւոց նորա ի նմանէն»։ անցողակի նկատենք որ այս զրոյցը հօրն հօրի վրայ և հօր մօրի ճիշտ կարող էր կազմուիլ։ Գրեցը Յրօն է կոչուած, որովհետև առաջին անգամ այնակից են սկսուած բաժանուել, այսինքն ցրիւ գալ Տարբանի գաւառները։ Յրօն բառի արմատն այս զրոյցի մէջ համարուած է շէշ։ բառի նախաւոր ձևը մըտածուած է իբր շէշէտ։ Իրմիայն հայ ժողովրդական ստուգարանութիւնը կարող էր այս ծագումը վերադրել շրէտ բառին։ Ուղիղորդարտի պատմաներն այսպիսով բնական ժողովրդական զրոյցներ էին։

Տարբանի հայրը՝ Սեմ արդէն մի անգամ, կարճ ժամանակով («Երկուսնեայ աւուրս») ապրած էր նոյն այն գետի եղերքին, այն գաւառում և այն փոքրիկ դաշտում, ուր յետագային հօրից բաժանուելով հաստատուած է Տարբանը։ Դրա համար է որ Խորենացին ասում է. «անդէն է նոյն գետեղեր»։

Արդ՝ Տարբանին վերաբերող խօսքերի մէջ աւերային Տարբանն է. նա՛ է որ «քննէ անդէն ի նոյն գետեղեր, անունն զգաւաւն Տարօն, և անուն տեղւոյն ուր բնակեցան՝ կոչէ Յրօն»։ Բայց ո՞ւր կամ ինչի՞նչ անունով է նա գաւառն անուանում Տարօն։ Եթէ իր անունով լինէր՝ այն ժամանակ Խորենացին պիտի գրէր. «և զգաւաւն անունն է յանունն էր Տարօն», ինչպէս Սեմի մասին քիչ վերջը գրում է. «և անունն է յանունն էր զիտանն Սեմ»։ Վերը տեսանք որ բնագիրն ասում է. «բնակէ անդէն ի նոյն գետեղեր, յորոյ անուն և զգաւաւն անունն է Տարօն»։ Այստեղից քերականորէն հեռուում է որ գաւառը Տարօն է կոչուած չէր, այլ անունով. «յորոյ անուն» բառերը քերականորէն «գետեղեր» բառին կարող են վերաբերիլ։ Խօսքը բաւական տարբերակ է։ Դրա պատճառն այն է որ Խորենացու բնագիրը կազմող Մ. Արեղեան ծանօթութեանց մէջ է գրել ձևագրական մի բնութեցում, որ պէտք է բնագրի մէջ ասնուէր։ Եթէ բնագիրը կազմէր կ' Ձե-

ապրի տուած տարբերակով, այն ժամանակ վերի խօսքը այս կերպարանքը կ'ըստանայ. «բնակէ անդէն ի նոյն եղերք գետին, յորոյ անուն և զգաւաւն անունն է Տարօն»։ Այս բնագրից աւելի պարզ է երևում, որ գաւառը Տարօն է կոչուած ո՛չ թէ Տարբանի անունով, այլ այն գետի, որի ափին բնակութիւն հաստատեց Տարբան։ Ի՞նչ էր այն գետի անունը՝—յայտնի չէ։ Խորենացին Սեմի մասին պարզապէս գրում է. «և զիտանն գաւառի միւում փոքու... չէր, ընդ մէջ նորա անցանկով»։ Իսկ Տարբանի մասին խօսելով ասում է. «բնակէ ի նոյն չէր, չէր» կամ «ի նոյն եղերք չէր»։

Բայց Տարբանին վերաբերելու հատուածը Ա. Ձեռագրի ընթերցուածքով կարելի է վերականգնել և այսպէս. «Իսկ ի կրտսերագունից որդւոցն նորա (Սեմի) Տարբան անուն, երեսուն ուտերօք և հնգետասան գետերօք և նոյնն արամբք մեկնեալ ի հօրէն՝ բնակէ անդէն ի նոյն գետեղեր, յորոյ անուն է շէշէտ և շէշէտ անունն է Տարօն, և զանուն տեղւոյն ուր բնակեցան՝ կոչէ Յրօն»։

Ընդգծած առգրի իմաստը լաւ հասկնալու համար կարգանք Խորենացու պատմութիւնից (Ա. ժր) մի գուգահեռ հատուած։ «Արամայիս, զորդի իւր զՇարայ, ըզհօրվածին և զշատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով ի գաշտ մի մօտաւոր, արգաւանդ և բերբի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած, յորոյ անուն է շէշէտ և շէշէտ անունն է Շիրակ»։ Այս հատուածի մէջ «յորոյ» գերանունը, որ այնքան հետու է ընկած «զՇարայ» բառից, վերաբերում է Շարային։ Դաշտը Շիրակ է կոչուած Շարայի անունով և ոչ Արագածի, որին սակայն կից է «յորոյ» գերանունը։ Ընդգծած առգրի իմաստն այն է, թէ «արքանունով և գաւառն ասում են անուանուած է Շիրակ»։ Այսինքն զրոյց պատմողներն ասում են թէ գաշտը Շիրակ է կոչուած Շարայի անունով։ Կարելի է և այնպէս հասկանալ (թէ և անսովոր կարող է համարուիլ) թէ՛ «արքանունով գաշտը անուանելով ասում են Շիրակ»։ Առաջին զէպքում բացատրութիւն տուողները զրոյց պատմողներն են. երկրորդ զէպքում

Սորենացիին է բացատրութիւն տալիս . բայց երկու ղէպքում ևս «յորոյ» գերանունը վերաբերում է Շարային: Ծիշտ նոյն ձևով կարելի է հասկանալ և Տարբանին վերաբերող հատուածը: Թէև այնտեղ ևս «յորոյ» գերանունը հետո է ընկած՝ Տարբան ա- նունից, բայց նա վերաբերում է Տարբա- նին և ոչ գետին կամ գետեղբին: Մ. Ա- բեղեանի կազմած բնագրի մէջ անուանէ՞ ղիմաւոր բայը արդեւում է «յորոյն» վե- րագրել Տարբանին, որ անուանէ՞ բայի ենթական է:

Այսպէս արեւն եթէ Սորենացու բը- նագիրը Ա. Ջեռաղբի ընթերցումով վե- րակազմէնք՝ այն ժամանակ Տարօնը Տար- բան անունից ծագած կ'ունենանք: Հիմայ ինչիր է՝ թէ կարճ ղ որևէ կապ լինել Տարբան և Տարօն անունների միջև: Ես ասում եմ. կարող է և կայ: Հետազօտելով հայերէնի շեշտադրութեան օրէնքները՝ ես եկած եմ այն եզրակացութեան որ նախ քան զրեքի զիւր ինչպէս նաև նրանից յետոյ, հայերէն բառերը երկու տեսակ շեշտադրութիւն են ունեցած: Միւսնոյն և նոյնիմաստ բառերի տարբեր շեշտադրու- թիւնը պէտք է համարել բացարձակ տար- բերութիւն: Իմ կարծիքով, օրինակ, մեր ետալանի բառերը երկու շեշտադրութիւն են ունեցած: Սրանցից առաջինը ես ան- ուանում եմ «բեւեւ» . նրա տարազն է. — օ — : այսինքն՝ զլիտուոր շեշտը առա- ջին վանկի վրայ, երկրորդական շեշտը երրորդ վանկի վրայ, իսկ միջին վանկն՝ անշեշտ: Երկրորդական միւս կերպը, որ ես անուանում եմ «բեւեւ», այս տա- րազն ունի, օ — : այսինքն առաջինն անշեշտ, երկրորդը՝ զլիտուոր շեշտով, իսկ երրորդը՝ երկրորդական շեշտով: Քառորդ գասական բառը, որ չզիտանք թէ ինչպէս էր շեշտում Ա. Մեդալ, առաջին տարագով պիտի հնչէր իբր թա՛ղաւոր, որից՝ միջին ձայնաւորի օրինական սղոմով պիտի ծա- գէր քառօր գաւառական ձևը: Ժողովըր- դական հարսանեաց երգն ասում է. «թա՛ղա- ւորի մէր դա՛ւրս արի, տե՛ս քեզ ինչե՛ր ենք բերել» . և Յով. Թումանեան հետեւե- լով Սասունցի Դաւթի ժողովրդական տար- բերակներին՝ գրում է. «Քնդաց թաղւորն իր աթոռին»: Նոյն բառն արեւելեան շեշ- տադրութեամբ պիտի հնչէր թա՛ղաւոր

և այդպէս էլ հնչում է արեւելեան բար- բաններում. «թաղաւորն ա՛պրած կենայ» ասում է իր հեքեաթը պատմելիս արեւե- լահայ գիւղացին: Այս ձևից միայն կարող էր ծագել Դարբադցու «թա՛ղաւոր» բառը, որ դասական քառօր բառն է՝ շեշտի ազ- դեցութեամբ ձևափոխուած: Այս նախա- պատրաստական ձանօթութիւնից յետոյ անցնինք Տարբանին և Տարօնին:

Տա՛ղաւ բառի նախաւոր ձևը կարող էր լինել Տա՛ղաւ: Այն օրէնքը, որի ուժով քառօրը դարձած է քառօր և Աքա՛ւաւը՝ Աքա՛ւ՝ ներդրելով նաև մեր լեզուի նա- խադրական չրջանում, Տա՛ղաւը պիտի դար- ձնէր Տա՛ղաւ: Այս բառի նախաւոր ձևը պէտք է որ ունենար արեւմտեան շեշտա- դրութիւն՝ հնչելով իբր Տա՛րբան, այլա- պէս նրանից չէր կարող Տարբան դուրս գալ: Միւս կողմից քառ քառ է . ին (իբր է հնչում ժամանակ), այսպէս՝ բառի ըս- կըցում պարսկ. «چهار» և հայ. «չառ» . բառի մէջ. պարսկ. «چهار» , որ նշանակում է «չա- ռ» . իր միտական «چهار» մասնիկը յապակե- լով կ'ստանանք «چهار», որին կշտում է մեր «աւ» բառը. հետեւապէս քառ կաւ ձայնա- ւորի միջև = : Բառի վերջում. — իբր օ- րինակ կարող են ծառայել զբարբի եզ- զորմիականի հոլովակերս զբերը՝ անձամք բանի: Այս հիման վրայ ենթադրական Տա՛ղաւ ձևից պիտի ծագէր Տա՛ղաւ, որ կարծում եմ ունեցած է արեւելեան շեշտա- դրութիւն, հնչելով իբր Տա՛ղաւ: Վերջին ձայնաւորի օրինական սղոմով նա պիտի դառնար Տա՛ղաւ, որ մեր Տարօնն է գա- սական դրութեամբ:

Տա՛ղաւ բառի սեռականը՝ Տա՛ղաւ, պէտք չէ շփոթութեան մասնէ ընթերցողին: Կա- րելի էր ենթադրել, որ Տա՛ղաւ բառի սեռա- կանը պէտք է լինէր Տա՛ղաւ, ինչպէս առաջին բառինը առաջինն է: Բայց ձև վեր- ջացող բառերը նմանակացմութեամբ հե- տեւած են տարբեր հոլովական ուղիների. այսպէս՝ քառօր — ի, աչ. կորէն. ի, ից. սը- բանց օրինակով Տա՛ղաւ գառնում է Տա՛ղա- նայ: Պա՛ղաւ առաջինն մի բրածոյ ձև էր գեո ևս դասական շրջանում. նա մի շատ հին հոլովաձևի մնացորդ է: Դալով՝ Տա՛րբան և \*Տարբան ենթադրական ձևերի տար- բեր շեշտադրութեան՝ դա պէտք է համա- բել նոյն բառի իմաստի տեսակաւորման

հետեանք, որ կատարուած է լեզուի հո-  
լովոյթի բնթացքին և որով իմաստի տար-  
բերութիւնը կապուած է շէտագրութեան  
տարբերութեան: Այս մասին կարող էի  
չառ աւելի բան ասել, բայց դրա համար  
պէտք էր նախապէս բնդարձակօրէն խօ-  
սել իմ նոր աեսութեան մասին, որ վե-  
րաբերում է մեր հնչիւնների ծագման,  
առնչութեան, ամփոփման և սղման:  
կարծում եմ ասածս բաւական է հաստա-  
տելու համար որ մի կապ կայ Տարբում և  
Տարբն բառերի միջև:

Արդ՝ մեր ժողովուրդը, որ սակզնել է  
Տարբան-Տարբոնի գրոյցը, արդեօք զիտե՞ր  
լեզուական այն օրէնքը, որով ք և ւը-  
ծորդ են: Արդեօք իր խելքին զօր տալով  
է նա սակզնել այն վարկածը թէ Տարբոն  
անունը Տարբանին դրածն է: Արի՛շ խօս-  
քով ժողովրդական ստուգաբանութեան  
արդիւնք է այս գրոյցը: Արդեօք Տարբան,  
Տարբոն, Յրօնք անունների մէջ մեր ա-  
կանջին չի հասնում պատմական էջը-նիւն  
մարող յիշատակի խուլ արձագանքը, որ  
զայլու է ալեսոր հնութեան խորքից:

Առնենք Յրօնք բառը: Իր ձևը յոգնակի  
է. եզակին պէտք է լինի յրօն, այսինքն  
յրօն՝ դասական գրութեամբ: Այդ բառն  
արտասանում ենք յրօն. այդպէս արտա-  
սանած են անշուշտ և խորհնացու ժամա-  
նակ: Յըք վանկի մէջ ը մի նախաոր ձայ-  
նաւորի սղում է: Այդ ձայնաւորը մեր գը-  
րոյցի յօրինողները համարել են է և այդ  
հիման վրայ խնամութեան մէջ են գրել  
բաժանել-ցրուելն ու Յրօնքը: Բայց այդ  
ը-ը կարող էր լինել և սղուած =: Այսպէս  
Տը-ը բայի արմատն է Տ, այսինքն՝ Տը, որ  
է Տը և կշռում է պարսկ. man-dan  
բառին, որ նշանակում է Տը-ը և ուր man  
արմատն է, իսկ dan բայական լծորդը:

Այս հաշուով յրօն անունը կարող է ա-  
սաջ գալ \*յրօն մի ձևից, որ Տարբոն բառի  
նման նախապէս պէտք է լինէր \*յրօն:

Խորենացին Ալիմպիոսորոսի կամ Ե-  
րեք հայերի բերանից ասում է. «նորին  
(այսինքն Սեմի) դարձեալ և առ եզերք  
սահմանացն Բակարիացոց ասէին բնակել  
սակաւ աւուրս, մնացեալ և մի ոմն յորդոց  
նորս անդ: Քանզի կողմանք արեւելից  
Զրուան զՍեմ կոչեն, և Զարուանդ զգա-  
ւան անուանեալ ասեն մինչև ցայժմ»:

Առանց բնագրի մանր քննութեան մէջ  
մանելու նկատենք, որ այս հատուածով  
Զրուան և Զարուանդ անունները ծագած  
են համարում Սեմից, որի զաւակի ա-  
նունից են ծագած համարում մեր \*Տարբում  
և \*Յրօն անունները: Միևեոյն ցեղի մար-  
դիկ են, որ բռնում են Սիմ լեռան ստորո-  
տից մինչև Բակարիացոց սահմանները և  
զաւանների անուն են դնում:

Արդ՝ ես նկատած եմ որ մեր լեզուի  
հնագոյն շրջանում =-երը ենթարկուած են  
=ացման: Մինչևս Արարատեան զաշտի  
զիւզացին ասում է րն-ը, րե-ը. Արցախե-  
ցին՝ հաւատարիմ նախագրական աւան-  
դութեան՝ շարունակում է ասել րն-ը, րե-  
ը: Այս =ացման ենթարկուած եմ համա-  
րում Զարուանդ անունը, որի նախաւոր  
ձևը պիտի լինէր Զարուանդ: Գալով Զար-  
անունին, որ հնչում ենք Զարբում, նա-  
խորդ երկու հիմքերով կարող էր ծագել  
նախաւոր Զարբում ձևից, ուր յետագային  
ասաջին =-ը սղած է, իսկ երկրորդը զար-  
ձած է =, ինչպէս Զարբումք անուան մէջ:  
Մենք այսպիսով ստանում ենք անունների  
մի շարք \*Տարբում, \*Յրօն, \*Զարբում, \*Զ-  
րբումք որոնք խնամի են \*Տարբում անու-  
նին: Արանք նոյնքան խնամի են իրար,  
որքան կոյր, քոյր, է-քոյր, է-քոյր, կոյր  
մատները, որոնք իմաստակից են: Բնա-  
լուծութեան լեզուն խօսելով այս բոլոր  
արմատները նոյն հիմունքն ունին, որ է  
քոյր — քոյրու-ը բայի արմատը, որ իմաստա-  
կից է վերինների: Երանց վերջին բաղա-  
ձայնները — ր-ը լծորդ են. իսկ առաջին  
բաղաձայնների լեզուաշինական արժէքն  
անորոշ է: Այդ յատուկ անունների ինչ-  
պէս նաև այն արմատների հետաւոր խը-  
նամութիւնը և ալեսոր նոյնութիւնը որո-  
շելու համար պէտք է վերակազմել հայե-  
րէնի հնչնարանութիւնը: Ասածս առայժմ  
բաւ է այս մասին:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

Պ. Ս. Ր. Ք.

